

մական օրինակաց մէջ այս ձեւը կը յիշուի՝ բազմեցոյց կամ բազմեղ (Փաւս. 207, '16), բազմեցոցիկն (Եղիշ. 133) կամ նստեիկն (Մեւր. 39) բայերով, որոց սովորական նշանակութիւնն յայտնի է մեր լեզուին մէջ. թէեւ Փաւստոս Պապայ յիշեալ օտար ձեւին համար եւս «բազմեալ» ըսէ լայնաբար: Մեր նիստին աւելի շօշափելի օրինակը կայ, թէեւ ոչ շատ հին, Գազիկ արծրունոյ ծանօթ քանդակին մէջ (աստ, 75), ուր արքայն ծալապատիկ նստած է թուրքի մը պէս, որուն հին ժամանակ եւ դեռ այսօր գաւառաց մէջ կրնայինք ըսել նաեւ՝ հայու մը պէս:

17. — Բաժանուածն կոչեց: — Մեր հանդէսն ունի երկու որոշ մասունք, իրարմէ բոլորովին տարբեր, որոց մին միւսին կը յաջորդէ. եւ են՝ կերակուր եւ Գինարդուր: Առաջնով կը սկսի խնճոյքը, եւ կ'աւարտի երկրորդով: Ասոնք մեր մէջ՝ սկսեալ հին դարերէն մինչեւ վերջ՝ այնպէս անջատ են իրարմէ, որ կերակրոյն հետ բնաւ զինի չի գործածուիր: Այսպէս Գրաստամատ նախ «եղ առաջի նորա (Արշակայ) ընթրիս՝ ըստ օրինաց թագաւորաց», եւ ապա երկրորդ գործողութեամբ մը «եղ առաջի նորա զինի, որպէս օրէն էր թագաւորացն» (Փաւս. 207): Պապ նախ «յըն-